

Բար սրբանք իմացն արար զհրա
հանքն ՅՈՂԶԵՆՆԵՍ ԹՈՒՄԵՆԵՆՅՑ. Ի յ:

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

567
1674

Գ. Մ. Կ. Կ. Կ. Կ.



Մ Ո Ս Կ Ո Ւ Ս.
ՏՊԱՐԱՆ ՄԿՐՏԻԶ ԲԱՐԻՈՒԴԱՐԵԱՆԻ.
1890

Губернатору

Ваше превосходительство

Дозволено Цензурою. С.-Петербургъ, 17 августа 1890 г.

Յ Ա Ն Կ



	ԵՐԵՍ.
Լճուցի Սարճն.	5
Մեհրի.	21
Ալէք.	42
Նաճատակ.	55
Արև և Լուսին.	62
Այդ Ի՞նչ սրտամաշ.	67
Իդձ.	70
Պանդուխտն երգեց.	72
Ես նայում եմ.	74
Անառային գիշերը զիւղում.	76
Պուշկինից.	79
N-ին	81
Ներքիբ, ո՞վ կոյս.	82
Եթէ իմ վերջին.	83
Ի՞նչ ես կատաղել.	84
Աղօթք.	85
Գիշերային առաջին աստղի դիմաց.	86
Երանուծիւն էր.	88
Շատերի նման.	92
Զարամիտներին.	93
Միամիտներին.	95
Երբ ես տխուր.	96
Մարգարէ.	97



ԼՕՌԵՑԻ ՍԸՔՅՆ.

~~Խոր~~
~~Սարգս~~ Է.

Խոր ձորի միջին ահա մի անակ-
Այնտեղ այս զիշեր Սարգսն է մենակ.
Նովիւ է Սարգսն, ունի մի ընկեր,
Տուն է ուղարկել նրան այս զիշեր,
Այն ինչ համկալը ¹⁾ հէնց առաւօտը
Գէպի սարերը քշեց իւր հօտը:

II.

Վ Այնչ, թէ միայն է նրա փարսեր,
Սարգսի համար ինչ բան է վախը.

¹⁾ Համկալ—գումանի կամ սարի ընկեր. համկալու-
ծին—ընկերուծին:

Շատ անգամ միայն ձեռքի մահակով
 Քշել է զայլերին ամբողջ վահմակով
 Գող թուրքերին էլ մի ահ է տուել,
 Որ սիրտ չեն անում աչքները ~~խփել~~ *խփել*
 Եւ մեր զիւղացիք աներկիւղ հովուին
 Արժանի «իզիթ»¹⁾ անունը տուին:

III.

Գեռ. նոր աղամայ մութը վարտաուած,
 Եւ հորիզոնից գեռ. կամայ-կամայ
 Նոր է լուսասաղն երեսը հանում,
 Որ Սաքոն ոչխարն արօտ է տանում:
 Շքեղադարար լերանց թարմ օդը
 Եւ շաղաթաթախ ծաղիկն ու խոտը,
 Անյայտ դրախտի կնդրուկի նման,
 Անոյշ բուրմունքով, շնչով կենսական
 Լցնում են կուրծքը, վերացնում հողին:
 Ի՞նչը կըհասնի Սաքոյի կիանքին.
 Ամեն առաւօտ տեսնում է, ինչպէս
 Արևելքումը շքեղահանդէս,

¹⁾ Իզիթ—ծուրքերէն բառ է—բաց, անվաներ:

Ամպերի միջեց արջնաթոյր և թուխ
 Բացվում է արշալոյսն ինչպէս հրարուխ,
 Կամ թէ բոցավառ հրդէհի նման,
 Որ թանձր ծխից յայտնում է իրան:
 Եւ առաջին շողն արեազալին
 Երբ որ ընկնում է լերանց կատարին,
 Կարմրբին տալով, ասես թէ քրքում,
 Վէս զազաթները վարդերանդ ներկում,
 Այն ինչ գեռ նոր է մութը նազանջում,
 Միզապատ լերան բարձրուղէշ լանջում
 Այս ժամանակին մեր Սաքօն կանգնած,
 Հովուական երկայն մահակին յինուած,
 Գլխարկը ծռած, կափնջին ուսին,
 Ծիկնած, կարմրած վառ արեւուսին,
 Սէդ ու վայրենի հայեացքը մեխած,
 Նայում է երկնի անոքով զմայլած.
 Կամ թէ ոչխարի վերէր թինկը
 Տռւած, ածում է իրան սրինդը.
 Կամ ժայռի գլխին, բարձր սիւնաձև,
 Արծուի հայեացքով նայում է ներքև,
 Այնակզ, խորին, մթին անդրնդում
 Գետը զայրազին զոռում է, թնդում:

ԻՎ.

Սև սև ամպեր են դալիս հաւաքւում:
 Մթնում է երկինքն ու փայլատակում,
 Սառած սասանած երկիրը վախից
 Ուզում է, կարծես, փախչել իւր տեղից,
 Եւ թանձր անտառը, սաստիկ հողմակոծ,
 Երբ Ֆշչացնում է ինչպէս մի սև օձ,
 Թիքվում է, տնքում ծառը հաստարմատ,
 Ամբողջ ծմակը հեծծում յուսահատ:
 Գոռում են ամպերն մթնած երկինքից,
 Գեախնը դողում, շարժվում է հիմքից.
 Ապա երկինքը, պատառուած կարծես,
 Հեղեղ է թափում կժով ջրի պէս,
 Հեղեղ, որ պէտք է քո աչքով տեսնես,
 Շիթերից բռնես, երկինքը հասնես:—
 Սաքօն ոչխարը ծմակն է քաշում,
 Մի տերեւախիտ ծառի տակ կանգնում,
 Եւ հեռւում է հանգիստ հայեացքով
 Թխպոտ ամպերին, որ յամբ ընթացքով
 Գնում են դէս-դէն, խառնվում, կուտակվում,
 Սև ծոցի միջից շանթեր արձակում.

Կամ գաշտի միջին, քարի կողք մտած,
 Հին հրացանը, մահակը խարտած
 Ու զլինն քաշած մաշուած եսփնջին
 Անխոռով լսում է. նրա ականջին
 Խլածայն հասնում են որոտն ամպերի,
 Կայծակի ճայթիւնն, վշտոյն անձրևի...
 Ազատ է ազատ բնութեան որդին.
 Միահաւասար մօտ են նրա սրտին
 Բնութեան բոլոր տեսք ու ձայները. —
 Թէ ականակիր մթնազիշերը,
 Թէ խաղաղ, շքեղ զարնան առաւօտ,
 Աղբիւրի խոխոջ, կայծակի որոտ...
 Ա՛խ, մարդու լիզուն տկար է, տկար,
 Բնութեան տեսքը պատմելու համար.
 Բայց նրա հոգին, երբեմն անարգել,
 Երկինք ու գետինք կարող է զրկել:

Վ.

Նրանց փարախում Ասածու գիշերը
 Հաւաքվում ձորի ողջ մզկուրները¹⁾,

1) Մզկուր — հոփիւ, խողարած, տաւարարած և այլն:

Շհուն¹⁾ ու պիուն²⁾ խառնում են իրար,
 Խաղում են, ասում³⁾, խնդում միալար.
 Եւ նուրբ սուլոցը սրնդի հոփուական
 Խօսում է կարծես.—մին հոփի նման
 Ոչխարի շանն է ձայն տալիս, կանչում,
 Մին էլ շան նման հաջում, կլանչում:
 Լսե՛լ ես, երբ լուռ զիշերուան ժամին
 Տերևներն զբոյշ շարժում է քամին,
 Եւ կամ թէ ճնշուած լեռնային կիրճում
 Ոնց է յուսահատ հողմը մունչում:
 Ահանջ ես զբել, թէ ոնց է երգում
 Առուակի կարկաճն անառառի խորքում.
 Լսե՛լ ես հեղեկ խոխոջն աղբւլբլի...
 Ահա բնութեան այս ձայներից մի
 Կազմած քաղցրալուր ներզաշնակութիւն
 ճնչում է իզիթ Սաքոյի շհուն:
 Իսկ ընկերներից մէկը սրտալի
 Երգում է, կանչում⁴⁾, ինչքան ձայն ունի:
 Եւ մեղամաղձոտ նրանց բայաթին⁵⁾

1) Շոու—սրինգ: 2) Պիու—սրնդի նման դործիք է, բայց
 սա զուռնի նման լեզուակ ունի: 3) Ասել—երգել: 4) Կան-
 չել — երգել: 5) Բայաթի — թուրքերէն կարծ ժողովրդա-
 կան երգ:

Գովեստ է տալիս վեհանձն իղիթին,
 Կամ հայրենիքի հողին ու քարին,
 Միրավառ կանչում սեւաչեայ կարին: Ռ
 Եւ ամեն մի ձայն այն երգում այնքան
 Պարզ է և զօրեղ, այնքան բնական,
 Որ մարդ նոյն ժամին, կարծես, սրտաթունդ
 Ելնում է իջնում երկինք ու անդունդ:
 Սպա խաղում են հերթով կենդապար¹⁾),
 Յետ-առաջ վազում, ցատկում անդադար,
 Եւ յանկարծ կանդնում, իրան կոտրատում,
 Ունկրով արագ գետնին վերհատում²⁾):
 Կռնաբռնուկ են անում իրար հետ,
 Շրջան են կազմում, զովի³⁾ են տալիս,—
 Երկու ոտն առաջ, իսկ մէկ ոտն ետ
 Գնում ու գառնում, պտոյտ են զալիս:
 Դեռ ըսկըսում են կամաց ծանրապար,
 Իսկ յետոյ միջակ. աստիճանաբար
 Արագացնում են, և պտոյտ առած
 Ամբողջ շրջանը դնում է թռած:
 Երբեմն ուռուցիկ կուրծքերն ուռցնում,

1) Կենդապար—մենակ պարել: 2) Վերհատել—ծննդ:

3) Զովի—այս պարը մի բանի տեղ ետլի է կոչվում:

Աղաղակում են սուլում, շլացնում,
 Մին էլ միասին յանկարծ կորանում,
 Ու կրկին դբվում, կրկին տաքանում
 Եւ ողևորուած դեախնը դոփում:
 Օճորքը դողում և հող է թափում:
 Նստում են յետոյ, զիտեցածներից,
 Իրանց պատերից, ծիծաղ բաներից¹⁾)
 Պատմում են երկար, երկար մինչև ուշ
 Գիշերուան կէսը, և քնում անուշ:

XXI.

Սակայն այս գիշեր լուսթիւն է ախրում
 Նրանց փարախում, և խորը ձորում:
 Մենակ է Սաքօն. ախուր թեք ընկած,
 Նա մտածում է իւր տատի պատմած
 Չարքերի մասին, որոնք միասին,
 Ծուռը ռաներով գիշերուան կիսին...
 Թուրքի կնանոնց կերպարանք առած
 Յայանձում են միայն մենակ մարդկերանց.
 Կամ ինչպէս քաջքերն այրերի միջից,
 Երբ մէկը նայում է քարի գլխից,

1) Ծիծաղ բան—դուարձալի պատմութիւն, աննկղօտ:

Կամ թէ ուշացած անցնում է ձորով,
 Խաբում են, կանչում ծանօթ ձայներով,
 Եւ մարդկանց նման խնջոյք են սարքում,
 Զուռնայ են ածում, թմբուկ են զարկում...
 Այսպիսի դէպքեր շատ են պատահած,
 Նոյն իսկ Սաքօին քանի՛սն են պատմած...
 Եւ յիշողութիւնն օրերից անցած
 Ետ կանչեց ձայներ վաղուց մոռացած,
 Զայներ ահալի, տխուր պատմութեան,
 Զար ողիների գործած չարութեան:
 Տատի խօսքերը նրա ականջին,
 Ուրուածայն, երկչոտ հնչեցին կրկին.
 Հնչեցին երկար, մինչև նրա վառ
 Երեակայութիւնը գրգռեցին ի սպառ:—
 Ահա պատկերներ, ազեղ, այլանդակ,
 Անհիթեթ շարքով, խառն և անկարգ,
 Ծանրաշարժ եկան Սաքօյի զիմաց
 Երեացին և—անցնում են կամաց:
 Աչքերը միայն կրակին յառած
 Ծանրը է շնչում Սաքօն ահառած,
 Եւ առողջ կուրծքը լեռնական մարդու
 Այլեկրծում է կասկած ահարկու.
 Այլ և ինչ կասկած,—նա հաւատում է. .

XII.

«Ո՞վ է հող թափում այս բուխուրակից...
 «Վահ... այն ո՞վ է... այն ո՞վ է երգիկից
 «Իլևական ծիծաղն երեսին նայում...
 «Պլըզած աչքերն ի՞նչպէս են փայլում...
 «Թէ աստղեր էին, որ պսպրղացին...
 «Ձէ՛, աչքեր էին... այ՛, ծիծաղեցին...
 «Ի՞նչ ոտնաձայն էր, որ կարովըն եկաւ...
 «Թեթև քայլերով դռանը մօտեցաւ...
 «Ո՞վ պէտք է լինի... ինչո՞ւ չէ խօսում...
 «Սյսպէս տարածում ի՞նչ բան է ուղում...
 «Բայց ինչպէս եղաւ, ազազել Զօրին¹⁾
 «Չըպատաստանեց անժամ եկորին...
 «Սյս ի՞նչպէս եկաւ... չէ՛, սա ով որ է,
 «Ծանօթ որմին է, շունը սովոր է...
 «Իմ շան ահիցը էլ ո՞վ սիրա կանի...
 «Իմացայ, ընկերս—Գէվօն կըլինի...
 «Սուա վախացնում է... Հա՛, նա է, նա...
 (Կանչում է) «Գէվօ՛»... ձայն ծպտուն չըկայ,

1) Զօրին—Սարօյի շան անունն է:

Միայն ահաւոր լուսթեան միջում
 Զորագեան¹⁾ է խուլ, մրափած վշում:
 Եւ ո՞վ կը լինի զարթուն այս ժամին,
 Աշխարհը քնած է, նոյն իսկ թոյլ քամին.
 Քնած չեն միայն անքուն չարերը,
 Վխտում են ուրախ լեքը ձորերը:
 Աչքերը հանդչող կրակին յառած
 Ծանր է շնչում Սաքոն ահառած,
 Եւ առողջ կուրծքը լեռնական մարդու
 Այեկոծում է կասկած ահարկու:
 Այլև ինչ կասկած, հաւատում է նա,
 Բայց աուր չի տալիս²⁾, — կռվում է ահա.
 «Շուաք էր դուցէ, աչքիս երեաց...
 «Ձէ, ահա կաուրը դողաց, երկրաց...
 «Գալիս են դարձեալ... ի՛նչպէս են վազում...
 «Իռան ետեկից ձայներ են լսվում...
 Վախեցած Սաքոն գլուխը մի քիչ
 Հագիւ բարձրացրեց, աղաղակ, քրքիչ
 Եւ դժոխայուր ձայներ բիւրաւոր

1) Զորագետ, Դերեղ կամ Բերդուչ պատմական գետն
 է. այս անունը կրում է Դսեղայ ձորից սկսած, ուր նրա
 երկու մեծ վտակները — Փամբակայ և Ղարախաչայ ջրերը
 միանում են: 2) Տուր չըտալ — անձնատուր չըլինել:

Բռնել էին գուռն ու կտուրը բոլոր:
 Սիրար գողգողաց և փշաքաղած
 Սաքօն ողջանդամ մի սարսուռ զգաց,
 Դէպի գռնակը երկչոտ հայեացքով
 Սչքերը չուեց, մտքի մէջ զօրով
 «Նրանք են» ասաց, և գուռը բացուեց,
 Թուրքի կանանցով փարախը լցուեց:
 Ինչպէս զիշերը երկնում սևակնած
 Փայլատակում է կայծակը յանկարծ,
 Այնպէս մի կրակ աչքերըն առաւ,
 Եւ իզիթ Սաքօն փարախից թռաւ:

ՄԻՒՆ.

Այն Լօռու ձորն է, ուր հանդիպակաց
 Ժայռերն ամեհի, նօթերը կիտած,
 Դէմ ու դէմ կանգնած, յամսու և անթարթ
 Հայեացքով իրար նայում են հանդարտ:
 Սև ծովի նման մշարը կանգնած
 Գրկում է նրանց կուրծքը կախ ընկած,
 Որ, կարծես, ահա, հէնց այս վարկենին
 Վայր կընկնեն անսահ անցուորի զլինն:
 Ահուելի ձոր է. այնտեղ Դերեղը

Փրփրած վազում է, սրնթաց գետը
 Գուում է, ինչպէս վերաւոր գաղան,
 Եւ աղաղակին այն երկրասասան
 Խոր, լայնաբերան քարանձաւները
 Կցում են իրանց քաջքի ձայները¹⁾,
 Կազմում վայրենի ներգաշնակութիւն.
 Սարսափ է ազգում անսովոր մարդուն:
 Գիշերը լուսնի երկչոտ շողերը
 Երբ որ ընկնում են այն ահեղ ձորը,
 Եւ ալքերի²⁾ հետ խաղում զողալով,
 Իսկ ալեքները գետի շողալով
 Յուզվում են, իրար ետեկից փախչում,
 Գերեզը խաւար անդունդի խորքում,
 Մի արծաթափայլ նեղ շերտի նման
 Պտոյտներ առած ձգվում է երկայն:
 Այս տախտի³⁾ վրայ, այն ժայռի զլխին
 Կանգնած է մենակ, խաւար ու լռին,
 Մի քանդուած հին բերդ, մի աւերակ վանք,
 Մռայլ ու տխուր, ինչպէս զարհուրանք,

1) Քաջքի ձայն — արծաղանդ: 2) Ալքեր — ջրերում բը-
 նակուող ողիներն են: 3) Տախտ — ծորի գառիվայրում
 գտնուած տափարակ տեղը:



ԿԵԶ
 1691

ԿՈՆՏԱՆՍՏԱՆ
 1691

Իսկ քարի զլիկց լուս մարդու նման
 Նայում է ձորին մի հին խաչարձան...

XX.

Խաւարչտին զիշեր, և կէս զիշերին
 Վէս Չորագեաի ժէռուտ ափերին,
 Անդնդանման խոր Լօռու ձորում
 Մի բարձրահասակ մարդ է թափառում:
 Ստուերի նման, ծառերի տակին
 Յայանվում է մին, չքանում կրկին.
 Եւ լայն խանչալի դաստակը կողքին
 Չարկելով գօտու երկաթեայ թողկին¹⁾,
 Չըրխկչրխկում է, կարծես իւր վարկով
 Համրում է նրա քայլերը կարգով:
 Հնչում է զուռնան մութ քարանձաւից.
 Չարերը վազում նրա ետեւից,
 Դեբեզն էլ անդուլ զրուում է՝ «Հա՛,
 «Սյստեղ է Սարճն, այստեղ է ահա՛»:

¹⁾ Թոխկայ—մետաղեայ բան է, որ գործ է անում թէ գօտու երկու ծայրերն ամրացնելու, կապելու և թէ իրրև վարդ, որ անց են կացնում գօտին:

Եւ դուրս են թռչում իւր ալիքներէց
 Գիսախուիւ ալքերն իրար ետեւից,
 Վազում են՝ բռնեն իզիթ Սաքոյին,
 Որ տանեն զետի յատակը խորին:
 Քար ու մացառուտ առած ոտնատակ
 Թռչում է Սաքոն քամուց էլ արագ.
 Սահայն, առաջին ցոլացին աչքեր,
 Թփից դուրս թռան մի քանի քաջքեր:
 Մի ակնթարթում Սաքոն իւր թափը
 Կտարեց և իսկոյն թողեց գետափը...
 Արձագանդ տուեց ձորն այդ միջոցին
 Նրա ազազել գամփուի Հաջոցին.
 Փարսխն էլ դուցէ մի գայլ է մտել,
 Աղքատի հօտը կերել, խեղատակ:
 Խելագուրկ Սաքոն ոչինչ չէ յիշում,
 Քշում են նրան, չարերը քշում,
 Քաջքերն էլ այրից զուռնա-դհօլով¹⁾
 Կանչում են, կանչում ծանօթ ձայներով.
 Իսկ Ջորագետից ալքեր են թռչում,
 Եւ ալիքները փրփրագէղ ուռչում,
 Մռայլէ միջին ծփում են կայտառ՝
 — «Բռնեցէք, փախա՛ւ Սաքոն խելագար»:

1) Դիօլ — Թմրուկ:



Վաղու՛մ է Սաքօն. այն ինչ այդ ժամին
 Սաքօյի նանը—սրտաւ նազանին,
 Փոքրիկ թռռներին տեսած ու լսած
 Քաջքից է պատմում որևորուած.
 Իսկ առաւօտեան նրան կենդանի,
 Խելազար Սաքօն վկայ կրկանդնի:

1889 թ.



Մ Ե Հ Ր Ի.

1.

X
«Միրելի Մեհրի, չէ՛ ամեն երկրում
Մարդիկ այսպիսի նեղութիւն չեն կրում:
Այս ի՞նչ երկիր է. տէր չլից կարգին,
Ամեն աւաղակ տէր է մեր գլխին...
Դողալով մտում է մարդ ամեն վայրկեան,
Թէ ահա իսկոյն, ուր որ են, կրգան,
Կտօջ տանից կառնեն-կրտանեն,
Որդիս կրելեն կամ ինձ կրտանեն...
Հալալ հաց չունենք թուրքիցն անկշտում,
Դառն աշխատում ենք ու դատարկ նստում:
Գետինը ձգած սերմը չենք վերցնում...
Այս ընչի՞ կեանք է, դէ՛ քեզ եմ հարցնում:
— Ես գիտեմ, Մհէ, ինձ ^{այն} ~~ինչ~~ ես ասում, X
Այսպէս է, հողիս, դուն ի՞նչ ես ուզում...»

Մեղանից հեռու, ասում են որ, մի
 Աշխարհք կայ, Մեհրի, բարեկարգ ու լի.
 Այնտեղ չէ իշխում դաղանի կիրքը,
 Այնտեղ չէ յարգվում կեղծաւոր դիրքը.
 Եւ մարգիկ այնտեղ իրար հետ սիրով
 Ապրում են հանգիստ, թուրքից ապահով. X
 Իսկ փողըն այնտեղ հողի պէս լի է,
 Ես էլ կըզնամ, շատ կարելի է...

—Օ՛, այս ցաւերիցն ես դուն հեռանում,
 Ապա կ'ս, Մհէ, ինձ ի՞նչ ես անում...

«Քեզ... քեզ կըյանձնեմ Տիրոջ խնամքին,
 Իսկ ես հնազանդ Նրա սուրբ կամքին,
 Կըզնամ, հողի՛ս, աշխատանք կանեմ,
 Գուցէ շուտով դամ ու քեզ էլ տանեմ...

—Այտեղ աշխատի՛ր, մի՛ գնալ Մհէ,
 Ինձնից հեռանալ չեմ թողուլ, չէ՛, չէ՛,
 Լաւ է միասին մեր ցաւը քաշենք,
 Քան իրար կարօտ, սիրտներս մաշենք...

«Սիրելի Մեհրի, ինձ հետ հաւասար
 Գուն քարշ ես եկել, ընկել քարէքար,
 Միշտ պակաս օրով, կիսակուշտ փորով,
 Շատ անգամ տկլոր, բորիկ ոսներով:
 Ի՞նչ կնք աշխատել, ցոյց տուր ինձ, հողիս,

Ի՞նչ, ի՞նչ ևս տեսնում տանս կամ հագիս.
 Բայց ուրիշ բան է, թէ այնտեղ գնամ,
 Տես ինչպէս պիտի շուտ հարատանամ:

—Այն հարստութիւնն ես ի՞նչ եմ անում.
 Ա՛խ, ՄՀէ, ՄՀէ, դու չես իմանում,
 Ինչն է ինձ տանջում, թէ որ իմանաս...
 Այն օտար երկրում որ հիւանդանաս,
 Գոնէ, ո՞վ պիտի քեզ սառը ջուր տայ,
 Պատռածդ կարի, կեղտոյ լուանայ...
 Ազիզ¹⁾ որ կրգայ, դուն անտուն, մենակ,
 Կուչ կրգաս սրա նրա պատի տակ...
 Լցուեց, հեկեկաց Մեհրին դառնազին.
 Սիրտ տուեց ՄՀէն.—«Բան չըկայ, այ կին»...

II.

Մի աշնանային ցուրտ իրիկուն է.
 Ծխոտ ու փլեկ հին գլխատուն է.
 Ածխակոթերը մլում են ախուր.
 Օջաղի շուրջը նստոտած են լուռ.
 Ծեր սկեսար կողքին հարսն է կուչ կկած,
 ՄՀէն նստած է երկուսի դիմաց:

¹⁾ Ազիզ օր—տօն օր. հանդիսաւոր օր.

Հաղիւ եւ նկատվում նրանց զէմքերը.
 Տխուր են մարդ ու կին, տխուր է ծերը,
 Յօնքերի տակից փայլում էր թախիծ,
 Եւ ահաբեկուած մի դաղանի վախից,
 Բերանն անատամ, դողլոջուն ձայնով
 Այսպէս բաց արաւ իրան պահելով.

—Ո՞ւր ես կամենում գնալ, իմ ՄՀէ,
 Այնտեղ ի՞նչ կայ, ի՞նչ, նպատակդ ի՞նչ է,
 Ինչո՞ւ ես թողնում քո հօր օջաղը,
 Ալևոր հօրդ, քո օղուշաղը:
 Ես ծերացել եմ, առաջուանը չեմ,
 Որ ամեն ցաւի ետեւից թռչեմ.

Արդէն հասել են մահուանս օրերը,
 Դուն էլ գնում ես, ո՞վ է մեր տէրը:
 Կաց այստեղ, որդի, հօրըդ ախանջ զիր,
 Չե՞ս. քո չեն բռնում, այստեղ աշխատիր:

«Այստեղ ի՞նչ կայ, հայր, որ ինչ աշխատեմ,
 Հէնց թէկուզ, ասենք, մնամ, աշխատեմ,
 Ի՞նչը կրպրծնի անօրէն թուրքից,—

Մարդու հացն անգամ խլում են ձեռքից»:

—Ոչ որ չի դիպչել քո արդար հացին,
 Տուր փարէն՝ պրծիր չարէն¹⁾, ասացին

¹⁾ Առած է:

Մեր լուսահողի խելօք պապերը:
 Կասարի՛ր, որդի, նրանց պատուէրը,
 Սոված չես մնալ, բախտաւոր կըլնես,
 Թուրքն էլ քաղցր աչքով միշտ կնայէ քեզ:
 «Աշխատանք չըկայ, հայրիկ, աշխատանք,
 Եղած չեղածն էլ որ թուրքերին տանք,
 Իսկ մե՞նք ինչ անենք, սոված կոտորուե՞նք.
 Մինչև ե՞րբ պիտի այսպէս չարչարուենք»:

— Մեր ցաւն է, որդի, մենք պիտի տանենք,
 Դուն ո՞նց ես ուզում, ուրիշ ի՞նչ անենք.
 Եթէ ձեռքիցդ մի բան է գալիս,
 Իէ արս՛, ո՞ւմ ես էլ մտիկ տալիս,
 Թէ չէ, ինչո՞ւ ես կորչում հողէց հող,
 Ո՞վ է քեզ համար այնտեղ կտրել փող:

«Զրգիտես, հայրիկ, այդ ինչ ես ասում,
 Այն երկրում փողը թիով են զիպում.
 Դուն չես հաւատում Մկօի խօսքին,
 Որ այնտեղ խանով¹⁾ են չափում ոսկին»:

— Խանով ոսկին քեզ համար չեն չափում,
 Ցնորքներ են, որդի, քեզ շլացնում, խաբում.
 Դարձի՛ր այդ ճամբից, լսի՛ր ծեր հօրդ,
 Պանդխտութեան մէջ կըսեացնես օրդ:

1) Խան—ցորենի չափ է:

«Ես չեմ ուզում, հայր, օրեր սեւայնել,
Սյլ մեր սև օրին մի ճար հասցնել.

Ես պիտի գնամ, և երբ որ Աստծով

Կրվերադառնամ ջերս լի ոսկով,

Կրգովես որդուդ, թէ ինչպէս ճարեց

Սյդ հարստութիւնն, քեզ մխիթարեց»:

— Իու գիտես, որդի, գնա՛, Տէր ընդ քեզ,

Բայց ան՛ս, մտեցդ երբէք չըձգես

Պապիդ օջաղը, քո հայրենիքդ,

Մերունի հօրդ, ջահել կնիկդ.

Թէ սրանց, Մհէ, դուն կրմոռանաս,

Իմացիր, թէկուզ թագաւոր դառնաս,

Օր չես քաշելու քո արած մեղքից:

Բարի ճանապարհ. թող քեզ ուղևիկեց

Լինի այն հրեշտակն, որ երբևի՛ն տարաւ

Տովբիթի որդուն դէպի Մարաստան.

Իսկ ես հայրական սրտով վիրաւոր

Քեզ համար աղօթք կանեմ ամեն օր—

Է՛հ, գնա՛ որդի, գնաս-գաս բարով...

Վերջացրեց խօսքը ծերունին զօրով...

ԻՒԻ.

Տանջվում էր, տանջվում խղճալի Մեհրին.
 Խառնվում էին նրա վշտերին
 Եւ անունդ էին տալիս անհամար
 Կասկածանքները տխուր ու յամառ:
 Սարսափում էր նա, երբ ամեն վայրկեան
 Մտաբերում էր ժամըն անջատման.
 Մի օր էլ մնաց, մի օրը վերջին,
 Որ ճամբու դնէ Մեհրին Մհէին:
 Եւ արտասուելով խեղճ կինը կարեց
 Մի սիրուն զայլուս¹⁾ ու վռէն շարեց
 Գոյնզգոյն յուլունքներ վզի շարանից²⁾,
 Մարդուն յիշատակ սուեց իրանից:

ԻՎ.

«Գէհ, մտաք բարով, ծերունի հայրիկ,
 Նաղելի Մեհրի, սիրուն հայրենիք,

1) Ղայլուս—փողի բսակ. 2) Շարան—յուլունքներից
 և դանազան փայլուն իրերից կազմած, շարած բան է, որ
 կանայք իբրև զարդ կրում են վզին:

Սրտակից աղերք, ընկեր-հարեան,
 Մօտիկ բարեկամ, արիւն-ազգական...
 Ասաց սրտաբեկ կրիտատարդը,
 Եւ, անխճելով իրան չար բաղդը,
 Ճանապարհ ընկաւ. այն ինչ ջրատար
 Մեհրին ետեկց նայում էր կրկար:
 ՄՀէի հայրն էլ, զառամ ծերունին,
 Դողլալով յենուած իւր զաւազանին,
 Բերանը բացած, ձեռքը ճակատին
 Նայում էր ապշած ՄՀէի ճամբին:
 Դեռ երեւում էր սե կէտի նման,
 Այն էլ չքացաւ, և ամենայն բան
 Վերջացաւ սրճաւ. ծերունին ու Մեհրին
 Ապշած ու քշուած կանգնած մնային:
 ՄՀէին ճամբու զնելու համար
 Հաւաքուածները, իրլե մխիթար,
 Մեհրուն ու ծերին յուսադրական
 Խօսքեր խօսային, կամաց հեռացան:
 Բայց կրկնօր, կրկար, մի ձայն թոյլ չնչին,
 Այսպէս խօսում էր նրանց ականջին.—

«Սիրելի Մեհրի, մնացիր բարով,
 Աչքերդ լցրած, ախուր երգերով
 Ձրյիշես էլ ինձ, մոռացիր, հոգիս,
 Ձրկանգնես երկար, չընայես ճամբիս.
 Թէ աչքդ մնայ ¹⁾), կրխարէ նա քեզ,
 Թէ յանկարծ շէմքում ոտնաձայն լսես,
 Հանդի՛սա, սիրելիս, զիշերուան ժամին
 Գիտէ միշտ խաբել խաբուսիկ քամին:
 Գուցէ թէ զիշերն անքուն աչքերով
 Ուզես իմանալ մի՞ճակա ասաղերով,
 Եւ յանկարծ մինը ծոր ապ ու թռչի ²⁾),
 Մութ հորիզոնի սահմանում կորչի,
 Խուոված հոգով և հազար ու մին
 Մտածմունքներով մանես անկողին,
 Մի ախուր երազ կըբաց կ'ազդէ քեզ,
 Որ քո Մհէին էլ տեսնելու չես» . . .

*
 * *

«Իսկ դուն, ո՞վ անբաղդ և չարատանջ մարդ,
 Դ՞ուն, իմ ծերունի հայրիկ ալեղարդ,

¹⁾ Աչքի մնալը ծամբորդի, գնացածի գալու նշան է:

²⁾ Աստղի թռչելը մահու նշան է:

Երբ որ կրինդրես արդէն չորացած
 Քո բազուկներդ երկինք տարածած
 Ու չես զտնիլ ծերութեան նեցուկ,
 Որքան արտասուք կրթափես ծածուկ.
 Ո՛հ, ինչպէս պիտի քո ձերմակ միրքի
 Վրայից հոսեն յորդ արտասուքի
 Աղի շիթերը, թրջեն վշտակոծ
 Մազոս, մերկ կուրծքդ, և ինչպէս սև օձ,
 Կրթունաւորեն օրերդ ծիրութեան
 Գաղանի կասկածներն Մհէիզ մահուան:
 Քո որդու ձեռքի հողին անարժան
 Կրկափես, հայրիկ, աչքերդ յաւիտեան.
 Անմխիթարանք և որդուդ կարօտ.
 Բայց և քո ախուր զերեզմանի մօտ
 Ձի կանգնելու քո Մհէն երբէք» . . .
 Դուք այնտե՛ղ, այնտե՛ղ իրար կըզրկէք . . .

Վ.

«Վարդիթեր քոյրիկ, զիշերս կրազում
 Դոնիցն ախանջիս մի ձայն է հասնում,
 Տնքում է երկնի և ծանր հառաչում,
 Յանկարծ մի կամաց Մհհրի է կանչում:

Գուրս եկայ, տեսնեմ՝ ՄՀէն էր կանգնած
 Մի սև ձի Հեծած, թռաւ ու գնաց.
 Եանուց կանչեցի՝ ՄՀէ, կաց, արի.
 Ճէնց այս կանչելումն աչքս բաց արի:
 Էլ ետ չ'նայեց, սև ձիուն Հեծած,
 Սև շորեր Հագած, սև ճամբով գնաց¹⁾.
 Քամու նման էր այն սև ձին վազում.
 Ի՞նչ է, Վարդիթեր, սև ձին երազում:
 — Մեհրի, Տէր Աստուած բարին կատարի,
 Տիրամօր առաջ մի ջուխտ մոմ վառի:
 «Երեք օր առաջ Շողերի գարին
 Թէև մօտիկ էր ցոյց տալիս բարին,
 Բայց չար Հարամին²⁾ (նա այսպէս ասաց)
 Ճամբայ չէ տալիս առաջը կտրած:
 — Մեհրի, Տէր Աստուած բարին յառաջի,
 Գրաւ խոստացիր սրբի ու խաչի:
 «Իսկ այս առաւօտ մի ազուաւ եկաւ
 Երգիկին վեր եկաւ, սիրաս դող ընկաւ,
 Երբ բերան բացեց, զլուխն ուտէ իրան,
 Բօթածայն կռաւեց³⁾ ճիշտ երևք բերան:

1) Երազում սևը տրտմութիւն է, մահ է, մանաւանդ
 վերև լիշած երեքը: 2) Հարամի—աւազակ, մարդասպան:

3) Ազուաւի կանչը չարագուշակ է:

—Մեհրի, Տէր Աստուած բարին կատարի,
Տիրամօր առաջ մի ջուխտ մոմ վառի:

XXI.

Ճամբայ է տանում դէպի ճայաստան.
Այն ճամբու վրայ կայ մի զերեզման,
Որ միշտ հայեացքով լուռ, ողորմելի,
Անցւորից խնդրում է մի ողորմի:
Չունի այն քարը չարաշուք զրած
Ոչ տապարազիր, ոչ անուն զրած,
Որ մարդ իմանայ, թէ այս վայրենի,
Սմայի վայրում ո՞վ պիտի լինի
Նանդատանալիս անտաշ քարի տակ:
Արդեօք խստակեաց մի սուրբ նահատակ,
Փախած աղմուկից մեղքոտ աշխարհի,
Եկաւ և այստեղ, այս ճանապարհի
Վերայ հաստատեց իրան օթեան,
Իբրև Ասածուց կարգած պահապան.
Թէ չար մարդիկը, դեռ կիսաճամբի,
Կարեցին թեկը ճամբորդի կեանքի.
Գուցէ մարդկանցից քշուած, հալածուած
Աւաղակը վէս իւր զլուխը ցած

Դրեց այստեղ, և այս ճամբու ասկին
Աւանդեց իրան մեղաւոր հոգին. . .

VII.

Մի օր մի քանի հայ անցւորական
Քրանքամկած այն ճամբովն եկան,
Կանգ առան այնտեղ ու շունչ քաշեցին,
Փռշտած գէմքից փռչին սրբեցին:
Դէպ այն շերիմը նրանցից մէկը
Երկչոտու թիւնով մեկնեց իւր ձեռքը,
Եւ այսպէս յորդոր կարգաց միւսերին՝
— Եղբարք, ողորմի տուէք Մհէին.
Սրանից առաջ մի քանի տարի
Եկանք տեսանք, որ այս ճանապարհի
Վերայ հաւաքուած գիշակեր թռչուն,
Գիշատող գազան, մի լէշ են ուտում:
Քշեցինք նրանց, — տեսնենք մի զիակ
Ի՛նչպէս սոսկալի, ի՛նչպէս այլանդակ.
Շատ ազեղ էին և զարհուրելի
Սիպտակ շարքերը բաց ատամների.
Դատարկ աչքերի փոսից էլ կարծես,
Տխուր հայեացքով նայում էր նա մեզ:

Դէմքին ու լէշին երկար նայեցինք.
 Վերջը շորերից միայն ճանաչեցինք,
 Եւ պատաստտած նրա դիակը
 Քարշ տուինք Հասցրինք այն ծառի տակը,
 Թաղեցինք այնտեղ և փախանք [Թագուն]:
 — «Աստուած ողորմի ՄՀէի Հոգուն».
 Մի բերան ամենքն ասացին սրտով
 Եւ ահակալած Հեռացան փութով:

ՄՄՄՄ.

Գնում է ձամբան մանում մի աւան,
 Տխուր, կիսաւեր Հայի բնակարան,
 Եւ այդ աւանի նոյն խակ առաջին
 Տան շէմքում կանգնած գեռահաս մի կին,
 Երեսը ծածկած բարակ քուշուշիով¹⁾,
 Առաջի ձամբին նայում է ուշքով.
 Այդ ձամբով մի օր նրա սիրելին
 Գնաց Հեռու տեղ, չ'գարձաւ կրկին:

¹⁾ Քուշուշի — հարսնական քող, շղարշ:

ԻՄ.

Տարիներ անցան, և աչքը ճամբին
 Մնաց նայելիս նորահարս Մեհրին.
 Ձեռքերը ծոցին, աչքերը լցուած
 Նայում էր, խօսում նա սարակուսած.

«Մէխ, մի ծիա դառնամ, թուչեմ ու գնամ,
 Գանեմ Մհէիս, տեսնեմ միանգամ.
 Բայց ո՞վ կըտայ ինձ թուչելու թևեր...
 Երնէկ իմանամ, երնէկ մինն ասէր,
 Թէ այս րօպէին նա ինչ է անում:
 Գործ ունի արդեօք, յաջող է գնում,
 Արդեօք մի անգամ ինձ միան է բերում,
 Գիտէ՞, թէ օրերն ինչպէս եմ համրում.
 Ով գիտէ, գուցէ այնտեղ մի սիրուն
 Խանում կին սիրեց, մոռացաւ Մեհրուն,
 Կամ, գուցէ, հիւանդ անքում է հիմայ,
 Ձորս կողմը նայում՝ իւր Մեհրին չըկայ.
 Թէ չար թշնամին, ձեռքը չորանայ,
 Սուրը բարձրացրեց Մհէիս վերայ.
 Ձըլինի թէ վաղուց, Մեհրի ու աշխարք
 Մոռացած, թողած, նա սև հողի տակ...»

Միս, ինչո՞ւ է, ինչո՞ւ այսքան տանջանքը,
 Միթէ աս է, Տէր, Քո տուած կեանքը.
 Միթէ այս էր ինձ համար պատրաստած,
 Ի՞նչ արի Քո դէմ, անարդար Աստուած:



Գնաց ու գնաց, չըզարձաւ կրկին.
 Բայց, ահա, մի օր նկատեց Մեհրին,
 Որ հեռուից մի բան սեւին է տալիս.
 «Ղարիբութիւնից ոքմին է զալիս»,
 Մաքումըն ասաց Մեհրին և ծովծով
 Աչքերի արցունքը սրբեց գոգնոցով:
 Սիրար սկսեց արագ բարախել,
 Վաղուց էր, խեղճ կինն այգպէս չէր եղել:
 «Օ, տառապածի ողորմած Աստուած»,
 Մմրմնջաց Մեհրին աչքերը լցուած,
 Ուրախութիւնից արցունքը յետին
 Ցաւերը պիտի ողջ թափէր դետին:
 Արդէն եկաւորն եկաւ մօտեցաւ,
 Քանի մօտեցաւ, այնքան շատացաւ.
 Եւ ահա, մի խումբ թուրք աւազակներ,
 Գիւղը քանդեցին արին, սակն ու վեր.

Լեղապատառ տուն ընկած Մեհրուն
 Տանից հանեցին, նստապրին ձիուն.
 Նրա ալեոր սկեսառն ընկաւ
 Թուրքերի սրից և խեղոյն հանգաւ.
 Ծերի անէծքի հետ 'ի միասին
 Տարան թուրքերըն իւր խոնարհ հարսին:

XXI.

Ճամբայ է տանում դէպի հայաստան.
 Այն ճամբու վերայ կայ մի գերեզման,
 Գերեզմանի մօտ մի ծառ է կանգնած.
 Այն հովանու տակ ահա մի յոգնած
 Զիււոր իջաւ, և նորա թարքին,
 Իրան փաթաթուած, նստած էր մի կին.
 Եւ տղամարդը զէնքերում կորած,
 Կանաչ խոտերում երբ ձիուն թողաց,
 Դարձաւ դէպի այն վաստակած կինը,
 Ցոյց տալով մատով մօտիկ շիրիմը.
 — Մեհրի, ճանաչե՛ր իղիթ Օսմանին.
 Նայիր առաջիկ այդ գերեզմանին.
 Այդտեղ թաղած է, մի քանի տարի
 Առաջ, իմ ձեռքով մեռած գեւաւորի

Հոտած մարմինը. կրբ որ նրան ևս
 Թալանում էի, հայհոյում էր մեզ:
 Շատ համարձակ էր այն լիբբ զեաւուրը,
 Բայց կրբ Օամանի կարուկ կեռ թուրը
 Նրա գլուխը ուսերից պոկեց,
 էլ բան չըխօսեց և խելօք պառկեց:
 Գրպանում, ծոցում ոչինչ չըգտայ,
 Աղքատի մինն էր, միայն այս առայ.
 Ասաց, գրպանից հանեց զայլուխը,
 Մեհրու արիւնը տուեց գլուխը.

— Ես պիտի քնեմ, Մեհրի, դու մնա,
 Լաւ նայի՛ր, որ ձին հեռու չըզնայ.
 Մինչև հոգն ընկնի, այնպէս վեր կենանք,
 Աստրծուն կանչենք, մեր ճամբէն դնանք:

ՃԻԼ.

Մեհրին քարացած, որպէս շանթահար
 Այն զերեզմանին նայում էր երկար
 Ուշքը վերացած, ոչինչ չէր աեսնում.
 Ուրիշ երկրում էր ականջին հասնում
 Անլուռ աղմուկը մօտիկ առուակի,
 Արձաղանդն իրանց պատող ծմակի.

Այն ինչ աչքերը փայփայում էին
 Զուարթ երեսով առողջ Մհէին:
 Նայում էր Մեհրին, նայում էր միայն,
 Եւ ահա բարակ, ողորմուկ մի ձայն
 Հասաւ ահանջին այն գերեզմանից.—
 «Առ իմ արիւնը, Մեհրի, Օսմանից:»
 Սարսափեց, դողաց և միանգամից,
 Ինչպէս որ յանկարծ զարթնում են քնից,
 Սթափուեց Մեհրին, նայեց դէս ու դէն,
 Ինչպէս նայում է վախեցած կրէն,
 Եւ մի միտք նրա դէմքըն այլայլեց.—
 Խոշոր աչքերում վրէժը փայլեց,
 Վայրկնի ձևով, զգոյշ ու կամոց
 Մի քանի քայլով թուրքին մօտ դնաց,
 Զեռքերը փռած, քնած էր թուրքը,
 Ծանր ու կրկար շնչում էր կուրծքը.
 Կամոց խանչալը պատենից քաշեց,
 Օսմանը յանկարծ բազուկը շարժեց,
 Թևթև թռիչքով ետ թռաւ Մեհրին,
 Խանչալը պահեց գողնոցի տակին
 Եւ անշարժ մնաց, մինչև որ դարձեալ
 Օսմանը սկսեց հանդիստ խորմփալ:
 Փայլեց պողպատը վառ արևի տակ.

Եւ Մեհրին, ինչպէս հոգեհան հրեշտակ,
 Խանչալը ձեռքին մնաց խոր քնած
 Իզիթի զլին մի ըտպէ կանգնած.
 Դարձեալ դէս ու դէն խնթի պէս նայեց,
 Զգոյշ կորացաւ, շունչն իրան պահեց,
 Խանչալի ծայրը դնելով կրծքին
 Իւր բոլոր ուժով հարեց դաստակին:
 Օամանը գոռաց, վեր թռաւ սեղեց,
 Մեհրին սարսափած փախս առաւ վախից.
 Վագրի թռիչքով ցատկեց Օամանը,
 Հասաւ ու բռնեց թիկունքի ծամը.
 Ետ դարձաւ Մեհրին ահից կատաղած,
 Դարձեալ թուրքի դէմ խանչալը շողաց,
 Մոնչաց ուժգին, մազերը թողաց,
 Կրակոտ աչքերն արիւնը կոխած,
 Կիսաշունչ թուրքը թուրը պտտեց.
 Ծղրտաց Մեհրին, աչքերը մթնեց.
 Վայր իջաւ թուրը, նրա հետ Մեհրին
 Մի թոյլ ճիչ հանեց, խանչալը ձեռին,
 Կուրծքը պատառած, արիւնաթաթաւ,
 ՄՀէի շերմի վերայ վայր ընկաւ.
 Վայր ընկաւ մեռաւ, նաև Օամանը,
 Եւ երեք դարձաւ մի գերեզմանը:

Դեռ իրար կողքի հանդուժ են այնտեղ
Ձար սպանողն ու սպանւողն անմեղ.
Եւ ամեն տարի դարուներ գալով
Հաւասար պճնում է նրանց դալարով:

1890 թ.



Ա Լ Է Պ.

1.

Ի՞նչ փարթամ է Արմենիան,
Ի՞նչ սիրուն է, աննման.
Լեռներ չքնաղ, հովասուն
Կատարներով պսպղուն.
Ծեր ծմախներ ծառախիտ,
Ձրեր անուշ ու վճիտ.
Դաշտեր բերրի, արդաւանդ,
Եւ լիութիւն երկնաւանդ.
Երկինքը ջինջ, բաց կապոյտ,
Սմայերն ազատ և անփոյթ,
Թեթև, անհետ, իբր անուրջ,
Պտտվում են նրա շուրջ.
Չնաշխարհիկ այն երկրին
Մարդիկ դրախտ կոչեցին:

Ոչ զբախտ է, ոչ եղեմ,
 Բայց Աստուծոյ, բաղլի դէմ
 Ձէ տրանջում տեղացին,
 Այլ իւր ամօթն երեսին,
 Հարեանի հետ միշտ հաշտ
 Ունենում է սար ու դաշտ:
 Նա առողջ է և զուարթ,
 Դէմքը կարմիր, ինչպէս վարդ,
 Բայց թէ ուժը իւր բազկի
 Ձէ գործ դնում չար ճամբի:
 Իրան դառը քրտինքով
 Աշխատում է անվրդով:
 Հէնց եղերքն հորիզոնի
 Վտղորդեան շառագունի,
 Գոհանում է Արարչից—
 Մաճկայը բռնած մաճից,
 Երեսին խաչ է հանում,
 Գնում իրան վարն անում,
 Հովիւն էլ դէպ արօտը
 Քշում, տանում է հօտը.
 Եւ խաղաղ էր նրա կեանքը,
 Կարծես, Աստուծոյ օրհնանքը
 Նրա վերայ իջել էր:

Ի՞նչ է շինում մեր սարում նա,
 Որ սպանի կամ գողանայ» —
 Եւ սնաչից¹⁾ կախ արած
 Տրացանն առաւ ու գնաց:

XX.

«Ալէք, Ալէք, ո՞ւր ես գնում,
 Վա՛յ իմ գլխին, ի՞նչ ես անում.
 Այն գաղանից Հեռու կացիր,
 Արի՛ որդի, արի՛, դարձիր,
 Գէթ խնայիր քո խեղճ նանին.
 Քեզ կըսպանի այն հարամին:
 Հարեաններ, ինձ օգնութիւն
 Եկէ՛ք, հասէ՛ք Աստծու սիրուն.
 Եկէ՛ք, հասէ՛ք, որդուս կալէք.
 Փախա՛ւ, գնա՛ց, Ալէք, Ալէք»...
 Խեղճ պառաւը գողգողալով,
 Իւր ծնկանն ու գլխին տալով,
 Նայեց, մինչև Ալէքն անցաւ
 Դիմացի սարն, անյայտացաւ:

¹⁾ Սնաչա—վրանի մէջ տեղի միակ սինը, որի վերայ ամրացնում են ձիպոսները վրանի:

Մ.

Բայց տեսի՛լ ես այն լեռները,
 Որոնց հպարտ կատարները
 Թանձր մեզով փաթաթուած,
 ձերմակ ձիւնով են միշտ պատած.
 Գազաթներիցն այն ձիւնապատ,
 Պսպրղալով, ինչպէս արծաթ,
 Աղբիւրներիցը դոյացած
 Վտակներն իջնում են ցած
 Եւ ոռոգում են լիառատ
 հովիտները դալարազարդ:
 Երկնահամբոյր այն լեռանց
 Օդը բուրմունք է ծաղկանց.
 հովիւ Այլէքն այն սարերում
 է մեծացել, միշտ ոչխարում:
 Իւր սիրելի շների հետ
 Գէպի լանջերն խոտաւէտ
 Ամեն Աստուծու առաւօտ
 Ոչխարը սանում է արօտ.
 Իրիկները մութն ընկնելիս

Բերում, ուրթումն¹⁾ արխաջ²⁾ տալիս,
 Նստում իրանց պարզ վրանում
 Ու ղովտիցը³⁾ շհուն հանում,
 Ածում, կանչում, զուարճանում,
 Մինչ յողնում է, քունը տանում:
 Նա բարի է, խոնարհ և հեղ,
 Իրան անմեղ զառների պէս,
 Բայց և... ահա այսօր
 Հրացանն առաւ ու զնայ, որ
 Ղաչաղ թուրքին անէ հարցում—
 Ի՞նչ է շինում այդ սարերում:

XXI.

Վերջալուսի վառ շողերը
 Կանաչ լեռանց այն կողերը
 Ոսկեզօծել են, և կիզում,
 Բարի գիշերն են ասում:

1) Ուրթ—այն որոշեալ տեղն է, ուր արձակում են վր-
 րանները սարուրի: 2) Արխաջ—հջխարի գիշերուան մնա-
 լու, հանգստանալու տեղն է: 3) Ղովտ—սրնգի երկայնու-
 թեամբ սնամէջ փայտ է, նրա մէջ են պահում սրինգը
 —շուին (շհու):

Այս ժամերին այն սարերում,
 Երբ տաւարը կիթ են բերում՝
 Հարայ Հրոց է միշտ լինում:
 Սակայն այսօր թուրքի բինում¹⁾,
 Որ մարդկանցից էլ դատարկ է,
 Ուրիշ աղմուկ, աղաղակ է.
 Ծուն չէ հաջում, կով բառանչում,
 Կանայքն են միայն «Հարայ»²⁾ կանչում:

ՄԱՆՆԱԿ

Իսկ այն ո՞վ է այս ժամանակ
 Կանաչ հովտում սառկած մենակ,
 Անփոյթ փուկ է ձեռքերը:
 Ապա ո՞ւր են իւր զէնքերը.
 Եթէ իրաւ, իզիթ է նա.
 Թող վեր կենայ, ճամբէն դնայ,
 Թէ մի ճամբորդ է նա յողնած,
 Կամ թէ հովիւ անուշ քնած:
 Սակայն ահա, նայի՛ր, վերի

1) Բինա — սարուրի վրանների խումբը: 2) Հարայ, կամ հաւար — կոչական ծայնարկուծիւնք են, օգնուծիւն կանչելու ժամանակ են դործ ավուում:

Մօտիկ բինից թուրք սարուորի
 Կարմրաղզեսա մի խումբ կանանց
 Արագաքայլ զալիս է ցած.
 Եկաւ ահա, եկաւ հասաւ,
 Եւ հէնց արնոտ այն դին տեսաւ,
 Ճիչ արձակեց մի ցաւալի,—
 «Վայ իմ Ալի, իզիթ Ալի»...

VIII.

«Հաւար, հասէք, այն անիծուած
 Շուն էրմանին¹⁾ դէսը զնաց,
 Ախ, թէ թվանք ունենայի
 Մի գնտակով կըսպանէի:
 Այն Ալէքն էր, ճանաչեցի,
 Դիմաց սարից նկատեցի,—
 Վրայ տուեց երբ այն դալին²⁾,
 Թվանքն առաւ իզիթ Ալին,
 Ու քիչ մնաց, պրծած բան էր,
 Որ դուշմանին³⁾ պիտի սպանէր,

1) Էրմանի—հայ: 2) Դալի—խենթ: 3) Դուշման—
 Թշնամի:

Բայց ընկերներն իսկոյն կորան
 Եւ էրմանին յաղթեց նորան:
 Նրանց զլիսին կընկայ լաչակ¹⁾,
 Անունները դրած զաչաղ²⁾,
 Չամաչեցին դէթ փափախից³⁾,
 Փախան անսիրտ հայի վախից...
 Գնտակահար ընկաւ Ալին,
 Նրա խանչալն և այնալին⁴⁾,
 Որ արծաթով էր պատած զուտ,
 Տարաւ յաղթողն այն անդուլթ,
 Տարաւ, փախաւ... դէսը գնաց»...
 Չեռքն Ալէքի ճամբին մեկնած
 Մղկրաալով բօթաբերը
 Մինչ պատմում էր այս խօսքերը,
 Տխուր ողբով իւր իզիթին
 Գովարանում, և Ալէքին
 Անիծում է թուրքի կինը,
 Իսկ մարդիկըն իրանց զինը
 Վըրկայ կանչում և երգվում են—
 Թէկուղ Ալէքին չըզտնեն,

1) Արհամարհական, նախատական դարձուած է: 2) Ղա-
 չաղ—աւազակ, փախստական: 3) Փափախ—զլիսարկ մոր-
 թէ: 4) Այնալի—փամփուշտաւոր հրացան, պիսոյ:

Գէթ մի ուրիշ հայ սպանել.—
Սընի զսասը¹⁾ միայն հանել:

ⵎⵎ.

Վերջին շողերն արևի
Կատարներին ծառերի
Դողգողացին ու յանկարծ
Թռան ծայրերը լերանց:
Ժանդառքն²⁾ արդէն ընկնում է,
Քաջ Սլէքը գնում է.
Մութն ու լուռ է ծմակը,
Միայն նրա ոտի տակը
Զոր խաշամն³⁾ է խշխշում,
Երկչոտ երէն խլըշում
Արագ փախչում է դէպի
Մթին խորքերն անտառի:
Հաւքերն էլ կամաց կամաց,
Բիզնաժամը վերջացրած,
Ճղների վրայ թռթռում,
Թառ են լինում ու լռում:

1) Ղասա—գրէժ: 2) Ժանդառք—երեկոյեան մուծը.
3) Խաշամ—ժափուած, չորացած տերև:

Բայց ահա լուռ ծմակի
 Միջին յանկարծ Ալէքի
 Սուր ականջին հասաւ մի
 Քաղցրամրմունջ մեղիզի:
 Սակաւ ևս առաջ պնաց,
 Եւ ահա նրա դիմաց
 Գուրս կկաւ մի ձիաւոր,
 Տեսքով պարթև, փառաւոր,
 Անդէն նստած վիհապանծ,
 Անփոյթ կերպով վայր թողած
 Լայն քղանցքը սև շորի
 Կողքերից երիվարի.
 Իսկ ալեխառն մօրուքը
 Յրիւ բռնած ողջ կուրծքը,
 Անհոգ ձայնով ինքն իրան
 Երդում էր մի շարական:
 Տեսաւ նրան Ալէքը,
 Զուարթացաւ, աջ ձեռքը
 Բարձրացնելով գէպի վեր
 Զայն տուեց.—Օրհնեա՛ ՚ի Տէր:
 —Աստուած օրհնէ քեզ, որդի.
 Բայց չէ որ մի աղամարդի
 Համար, անշուշտ, շատ են շատ

Ամեն զէնքից երկու հաս:

«Ճիշտ է, աէր հայր, սակայն դուն
Չբղիտես որ մինչև տուն

Աւարն յաղթողն է ամնում:

Որ այնքան ձայն էր հանում¹⁾

Չարիքներովն անտօր,

Այն թուրք Ալին հէնց այսօր

Մամնալի գրախար գնաց,

Իսկ զէնքերն ինձ մնաց»:

—Սիրուն աւար ես արեղ,

Բայց աւարիցդ առաւել

Գործքդ է սիրուն, ես իմ հողին,

Գովեց աէրաէրն Ալէքին:

«Փառաւորիս դուն, աէրաէր,

Լաւ խօսեցիր. աջըդ բեր,

Մի համբարեմ, որ մեղքիս

Թողութիւն էլ ես սալիս»:

—Ապրես Ալէք, շատ ապրես,

Թող Աստուած զօրայնէ քեղ,

Որ Ալնի պէս լիրբ թուրքին

Գիտես պատժել իւր կարգին:

¹⁾ Չայն հանել—հնչակ ստանալ:

Վկայ է սուրբ օծումն,
 Մի նշխար կայ ծոցումն,
 Իրբև պարզև կենարար
 Քեզ եմ տալիս զրա համար:
 Դուն ոչ թէ մեղք ես արելը—
 Մի սուրբ պարտք ես կատարելը.
 Անիրաւ մարդու զխմաց
 Վրէժխնդիր է և Աստուած:
 Վրէժխնդիր է և Աստուած,
 Ծեր անտառը որտաց:

1889 թ.



Ն Ա Հ Ա Տ Ա Կ.

Է.

Փարթամ Կովկասի պարզ երկնքի տակ,
Երկնաբերձ լեռան զառիվայրի կրճքին,
Հանդում է վաղուց մի սուրբ նահատակ,
Կուստիան և թաւ ծմակի միջին:

Քանդուած է մատուռն, քարերը ջրուած,
Եւ աւերակի վերայ սգառած,
Կանաչ բաղեղով խտապինդ գրկուած
Նիրհում էր ուռին ճիւղերը փռած:

Խոնարհուած էր խաչն իւր պատուանդանից
Եւ ընկած հեռու սուրբ աւերակից,
Իսկ գերեզմանը մեծ նահատակի
Մամուտ նայում էր խաչամի տակից:

Գիշերներն այնանց կանթեղ չէր վառուում,
 Այցելում էին նրան երէները,
 Եւ միշտ հանդստեան երգ էր յօրինում
 Քամին, շարժելով լայն տերեւները:

XX.

Այդ լուռ ու խաղաղ վայրում մենայած,
 Երկար ժամանակ Աստուծոյ մարդու
 Անշուք շիրիմը մարդկանցից մնաց
 Անյայտ և անզարդ, առանց այցելու,

Մինչև որ մի օր Աստուծոյ հրամանով,
 Երազ եկաւ մի արդար մարդու մօտ,—
 Թէ այս ինչ աեղը թաղուած է մի սուրբ,
 Յաւերով լիքը երկրին անձանօթ:

Այսպիսի հրաշքով նա յայտնուեցաւ
 Մարդկային ազգի փրկութեան համար,
 Եւ հռչակաւ որ ուխտատեղ դարձաւ,
 Բարձրացաւ խորան դեղեցկակամար:

ԻԻԻ.

Նա անարտունջ, ասում է հին բանը,
 Ինչպէս քրիստոնեայ բարեպաշտ և քաջ,
 Պահելով Տիրոջ սուրբ պատուիրանը,
 Գլուխը թեքեց թշնամու առաջ:

Եւ արգար մարդիկ տեսել են աչքովի
 Ասում է նոյնպէս աւանդութիւնը,
 Որ լուս է իջել երկնային հրաշքով
 Եւ բժշկում է հիւանդութիւնը:

Յաճախ բերանովն արժանաւորի
 Յայանել է երկրին Աստուծոյ կամքը,
 Եւ ժողովուրդը գլխովին տեղի
 Զօնում է նրան իրան յարգանքը:

Բայց և շատ անգամ իւր զօրութիւնը
 Նա ցոյց է տուել մի պատժով արգար,
 Քանդելով մէկի ողջ տեղ ու սունը,
 Մարդկանցն անյայտ մեղքերի համար:

Նա է մեղաւորին տալիս պատիժը,
 Արժանաւորին ուղած բարիքը.
 Նա է սահմանում, զործքին համեմատ,
 Մահկանացուի զլիսի գալիքը:

Ահա թէ ինչու հայ ժողովուրդը,
 Խաչ կամ նահատակ անունը տալով,
 Զուր է համարում մարդկային ջանքը,—
 Նրա մեծ զօրքի վերայ յուսալով:

Կամ երբ որ տէրակին իւր սուփը ձեռքին
 Յայտնվում է նրան կրկին և կրկին,
 Առատ շահելով, յանուն սուրբ Խաչին,
 Նա հաւատում է թէ՛ փրկեց հոգին:

 ԻՎ.

Այնչեւն է անցւոր այն մատրան մօտից
 Երկիւղածութեամբ և խաչակնքում,
 Զարատանջ օրով գառնացած սրտից
 Այսպէս լիասիրտ աղօթում մարում:—

«Ո՛վ սուրբ Նահատակ, գլխովդ պտոյտ դամ,
 «Գուն հասցնես ինձ ապրուստ օրական,
 «Բո՞ մե՞ զօրքովդ, անդուժ, անզգամ
 «Թ՛ շնամուս ջնջես և առնես կոխան»:

*
 * *

Հայոց ժողովուրդն ահա խոնուած
 Հեռեում է իւր ծերուկ տերաէրին՝
 Խաչից խնդրելու, որ բռնուած
 Երկինքը խնայէ իրան արտերին:

Թէ մի վարակիչ յաւ է տարածուած,
 Մարտին ուսում է գիւղացու ջանը,
 Այս «երկնառաք պատուհասի» գէ՛մ
 «Օրհնած հողն» է միակ գարմանը:

*
 * *

Արևը կրակ է թափում վերից.
 Հայուհին ընկած խաչի առաջին,
 Արիւն արցունք է չափում աչերից,
 Օգնութիւն հայցում,—հիւանդ է որդին:

Եւ զարդարում է ջերմեռանդ սրտով
 Ծառի ճիւղերը իւր կտրած մազով,
 Ուխտում է կրկար պաս ու ծոմ պահել,
 Ինչպէս ազգել է խաչը կրազով:

*
 * *

Ահա մի ծեր կին մաղախն ուսին,
 Որդի չի ծնում մանկաախ հարսին,
 Պիտի հօթն զիւղ «խաչի սէր» ման դայ,—
 Ամուլ արգանդին խաչը պատուղ ապ:

Տաախ կաւից քօղը երեսին,
 Ոտքերը բոբիկ, կուչ ու հուպ գալով
 Գնում է հարսը զբաւը ձեռքին,
 Իրաւ չըզործած մեղքերը լայով:

*
 * *

Ահա ուխտաւորն ահով ու զողով
 Խմբուած լսում է պատգամաւորին¹⁾,

1) Պատգամաւոր կամ ընկնաւոր, շատ տեղ «նղա-

Որը պատմում է, իրան ծեծելով,
Ինչ է կամեցել երկինքը ուրին:

Մրան մուրազը, նրան աշխարանք,
Կամ պահանջում է զոհեր ծանրագին.
Միւսին ցեղէ-ցեղ նղովք, բանապրանք,
Որ հայհոյել է իւր ընկնաւորին:

Մ.

Փարթամ Կովկասի պարզ երկնքի տակ,
Ուր չոր քարն էլ է ծլում, կանաչում,
Տեղացու սիրար միաժամանակ
Մի զաղանի երկիւղ հալում է, մաշում:

Նա իրան ուժին դեռ չէ հաւատում:
Նա դեռ իրանից զուրս է որոնում
Բարօրութիւնը իւր չարքաշ կեանքի
Եւ զոհացումն հասած զրկանքի:

1888 Ս.

ւոդ» են ասում, որովհետև դեռ Դելֆի պատգամախօսի
նման ուշաբարձվում է, ապա փրփրած, իրան ծեծելով
յայտնում «աղայի» — խաչի կամբը:

ԱՐԵՒ ԵՒ ԼՈՒՍԻՆՆ՝)

(ՃՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՒԱՆԴՈՒԹԻՒՆ.)



Ասում են իբրև երկնում կապուտակ
Կայ մի լուսեղէն սիրուն ապարանք.
Սյնտեղ եթերքում, ամպերի գլխին
Ամուր, անսասան կանգնած է նա մին:
Նրա դռներին պահ^{եղբայր}ստան չէ հսկում,
Ոչ մօտից անցնող, ոչ ձայն է լսվում.
Միայն գիւթական ամրոցի միջին
Տաշարն առաջին չոքած է մի կին:
Խմոր է հունցում, և բազուկները
Վերև են քաշած մինչ արմունկները.

1) Այս աւանդումիւնք Լոռի են պատմում:

Խմոր է հունցում և անուշ երգում,
 Որ փափկահնչիւն լռին կթերքում
 Անօտր այերը թիթե տատանում,
 Կամսց հեռանում է, անհետանում:
 Ահա յամբընթաց, ձիւնափայլ, ճերմակ
 Ամպերը կտրած միմեանց քամակ,
 Ինչպէս դնայուն լեռներ ~~համարին~~, *մեռաց թե*
 Ունկնդիր են այն քաղցրալուր երգին:
 Այն հրաշագեղ կինն երկնաբնակ
 Ունի երկու հաս գեղեցիկ զաւակ.
 Եւ ահա կանչեց իր սիրուն զոյգին,
 Զայն տուեց թէ չէ՝ զուրս եկան կողքին:
 Աղջիկ է մեծն, անունն Արեգակ,
 Նմանը չքկայ երկնքում հրեշաակ.
 Աչքերը սևսև, մազերը դանդուր,
 Յօնքերը կեռկեռ¹⁾, ասես մի-մի թուր.
 Իսկ փոքրը աղայ. անունը Լուսնեակ,
 Շարմաղ, ինչպէս ձիւն, իրաւ լուսունակ:
 Ապա թէ խօսեց մայրը լուսածին.—
 «Գնացէք, որդիք, Արեգակ, Լուսին,
 Մէկզ գիշերը, միւսզ ցերեկը,

1) Կեռկեռ—կամար:

Լուսաւորեցէք խաւար աշխարհքը,
 Դէ՛հ բաւական է, գնացէք, որդիք,
 չերիք խաւարում խարխափեն մարդիկ:
 — Ես յերեկը կերթամ, ասաց Լուսնեակը,
 Լուսաւորելու խաւար աշխարհքը,
 Եւ այնտեղ ինչ որ տեսնեմ, նկատեմ,
 Կըզամ քեզ, մայրիկ, մինմին կըպատմեմ:
 — Վն՛հ, չէ՛, ես պիտի գնամ յերեկը,
 Խօսեց վրդովուած սիրուն Արեզը.
 Միթէ աղջիկը կըշօջն՞ զիշերը,
 Որոշեր, խնդրեմ, մայրիկ, մեր զերը:
 — Լսի՛ր, իմ Լուսին, չէ՛, խելօք ես գուն,
 Յորդորեց մայրըն իւր յամառ որդուն,
 Արեգն աղջիկ է, նա կըվախենայ,
 Դու քաջ աղայ ես, զիշերը գնա:
 Սակայն Լուսինը պպին էր կանգնել¹⁾,
 Սիրուն քրօջը չուզեց զիջանել.
 Եւ այդ ժամանակ մայրը լուսածին
 Բարկացած՝ դարձաւ յամառ Լուսնեակին. —
 — Բաւական Լուսին, պատանի դու վէս,
 Գնա՛ քո զործին, հեռացիր աչքէս:

1) Պպին կանգնել — լամառել, կամակորել:

Ասաց, Լուսնեակի երեսին սիպտակ
 Խմորոս ձեռքով զարկեց մի ապտակ:
 Խռովեց Լուսինն ու լացակեքած
 Դուրս եկաւ իսկոյն իր դորձին զնաց.
 Բայց ապտակ կերած օրուանից զէսը
 Խմորոս է նրա քիթն ու երեսը:
 Սակայն ամաչկոտ Արեգակն այժմ էլ
 Մարդուց էր քաշվում ցերեկով շջջէլ:
 Եւ ահա մայրըն Արեւին աուեց
 Մի բուռն ասեղ, այսպէս պատուիրեց.—
 Հողեղէն աչքեր թէ որ նային քեզ,
 Այս ասեղներով նրանց կըծակես:
 Արեւը շիկնած, մեծ ապարանքից
 Դուրս եկաւ երկինք, ամպի տրանքից
 Նայեց աշխարքին, կենսատու շառայլ
 Իջաւ, լուսացաւ երկինքը մուայլ,
 Եւ զուարթացաւ բնութիւնն ամեն:
 Բայց մինչև այսօր ոչ մի Հողեղէն
 Չէ կարող նայել նրա լոյս զէմքին,
 Աչքեր է ծակում, ասեղ կայ ձեռքին:
 Մէկը ցերեկը, միւսը զիշերը,
 Ձոկ կատարելով իրանց զերերը,
 Երկար ժամանակ իրար չըսեսան,

Սաստիկ կարօտով տանջուել սկսան:
 Եւ տուեց Սասուլաճ իրարից բաժան
 Քոյր ու եղբօրը մի ժամ տեսութեան.
 Այդ տեսակցութեան ժամին կարօտաճ
 Քոյրն ու եղբայրը զրկում են միմեանց.
 Իսկ քոյր ու եղբայր կրբօր զրկվում են,
 Մարդիկ մի առ ժամ լուսից զրկվում են:

1887 թ. օգոստոս.



*
* *

Այդ ի՞նչ սրտամաշ տխրութիւն է քեզ
Պատելչ հայրենի զեղեցիկ աշխարհ:
Մինչև ե՞րբ պիտի չարչարուես այգպէս
Տառապանքներով, առանց մխիթար. . .

Իմ հայրենիքս տխուր է, տխուր. . .
Ուր աչք եմ դարձնում տխուր աւերակ,
Ամեն տեղ միայն, միայն ցուարուր
Հեծութեան ձայներ, երկչոտ աղաղակ:

Թէ երկրագործն է հօրովէլ կանչում,
Թէ մայրը որդուն օրօրք է ասում,
Թէ հովիւն իրան սրինգը հնչում,
Մի յուսակտուր հառաչք եմ լսում:

Աշխարհից, մարդույ յոյսերը կտրած
 Գանգատվում է նա և ցաւից անքում,
 Կեանքիցը զզուած, սակայն զեռ չ'ապրած,
 Հանդիսա է խնդրում հեռն, երկնքում. . .

Միթէ արամութեան թախիծըն այդպէս
 Խեղցից նրա մէջ ապրելու յոյսը.
 Միթէ այլևս նա չէ երգելու
 Իրան պապերի երգած խրախոյսը:

Մինչև երբ պիտի մարդիկ կատաղի
 Արցունքովն հայի կերածը թրջեն,
 Եւ երկար պիտի մեռելաթաղի
 Տաղերով ազահ ցէրբէրներ շջեն. . .

Միթէ գեռ ևս անսիրա հագարը
 Այն աւերակաց վերայ պիտ իշխէ,
 Անարգէ, պղծէ մեր սուրբ տաճարը,
 Անարժաններին շնորհներ բաշխէ. . .

Եւ չարագուշակ մտքերով յուզուած
 Քաշվում, մանոււմ եմ մի խաղաղ անկիւն.
 Եւ երկար անչարժ խորասուզուած
 Յաճում եմ նրա ցաւերում անհուն:

Աւելի խորը, աւելի հեռու
 Միաբն ինձ անում, թողնում, ասնում է.
 Թռչում է յանկարծ մի ծանր հառաչանք
 Եւ սիրտս կարծես հանդստանում է:

1890 թ. մարտ.



Ի Ղ 2.

(ԼԵՐՄՕՆՏՈՎԻՅ ՓՈԽԱԴԻՐՈՒԹԻՒՆ.)

— 0, 2, 00 —

Ինչո՞ւ չեմ թռչուն, վայրենի մի հաւ,
Որ հիմայ զլինիս վերեւից թռաւ.
Ինչո՞ւ չեմ կարող երկնքում ճախրել
Եւ ազատութիւն միմիայն սիրել:

Ես գէպի ծարօն կրսլանայի,
Ուր ծողկում են դաշտերն իմ պապերի,
Դատարկ ամբոյցում միգապսա լերանց
Հանգչում են մոռփցուած աճիւնքը նրանց:

Սյնտեղ Հին պատից մնում են կախած
Նրանց լայն վահանն ու սուրը ժանգրտած.

Կրթութիւնի սրի, վահանի վրայով,
Եւ կրտսրէի փոշին թևերով:

Եւ պարթևական լուսճ քնարի
Ժանգոտ լարերին եւ կրկարիէի,
Որ նրա ձայնը դարձեալ հոգեհուազ
Տնէր մշտապէս կամարների տակ:

Ճակատադրի խիստ օրէնքների դէմ
Ի զուր է խնդիրս,—եւ այդ լու զիտեմ.
Իմ և բլուրների միջև հայրական
Սարեր ու ձորեր, կապոյտ ծովեր կան:

Վերջին շառաւիղը զիւցապունների
Ահա տարազիր, ցոյփ կեանքի զերի.
Այստեղ ծուռեցայ, բայց ուրիշ հոգով...
Ախ, ինչու չեմ եւ թռչուն վայրենի:

1889 թ.





Պանդուխտն երգեց օտար երկրում
Եւ սրտաբեկ յոգուց քաշեց,
Երբ որ ախուր իւր երգերում
Անցած ուրախ օրերն յիշեց:

Մարմնով ախար, հոգով ախուր
Շուրջը նայեց, մէկը չքար,
Որ տար զէթ մի բաժակ ցուրտ ջուր,—
Ողբաց պանդուխտն անմխիթար:

Եւ նա խնդրեց անժամանակ
Հանգստութեան լուռ զերեզման,
Անցոյս երգեց վերջին նուագ,—
«Արի՛, չարքաշ կեանքիս վախճան».

«Էլ ոյժ չըկայ.—բարեաւ մնաք,
 «Դուք սև օրեր պանդխտութեան,
 «Դուն, Հայրական Հեռու անակ,
 «Եւ երազներ պատանեկան:

«Իսկ դուն արի, քաղցր յիշատակ,
 «Կորցրած սիրոյ, վայելչութեան,
 «Արի ինձ Հեա իբրև սիրտանք
 «Գերեզմանիս լուս տխրութեան»:

Մեռաւ պանդուխան. բարեաւ մնաք...
 Գիտէք, որքան ձեզնից թաղուն
 Խեղճք Հեծեց, ողբաց մենակ...
 Գէթ ողորմի սուէք Հոգուն:

1890 թ. ապրիլի 2.





Ես նայում եմ իմ առջև
Ահա Տիրոջ աշխարհը.
Բերրի դաշտերը մինչև
ճեռու լեռանց այն շարքը

Լայնարձակ, դալարագեղ
Տարածվում են և կորչում
Մշուշի մեջ, իսկ այնտեղ
ձոխ անտառն է կանաչում:

Ուր որ աղաս շրջելով
Ապրում են, կրէ, գազան,
Եւ թռչունքը ճախրելով
Երգ են ասում դոհութեան:

Ահա, շքեղ գաշախ միջով
 Գալարվում է և անցնում
 Հանդարա գետը մրմունջով.
 Հեռու, հեռու է գնում:

Նրա գալար ափերում
 Մինը հաղար է բերում:
 Սահայն ահա, միւս կողմում
 Կապոյտ ծովն է մեղմ ծփում:

Ի՞նչքան ձոխ է, հրաշալի,
 Այս աշխարհը լայն, արձակ,
 Ամեն մի շունչ աչքը լի
 Կապրէ այստեղ համարձակ:

Ես նայում եմ, և մի մտք
 Յղանում է ինձանում:
 Ինչու համար են մարդիկ
 Իրար զրկում, սպանում:

1889 թ.



ԱՄՆՈՒՅԻՆ ԳԻՇԵՐԸ ԳԻՒՂՈՒՄ.

Լուսնկայ զիշեր,
Երկինքը պայծառ.
Մեհամար ասողեր
Ճրր.քճրր.քում են վառ:

Քնած է Դսեղ՝
Նին հայի զիւղը,
Մթնած ու լուռ է
Գիւղացու խուղը:

Եւ թիր զիւղական
Ընանիքն ահա,
Սրահում, կալում,
Կամ կարի վերայ,

Խոնջացած օրուան
 Դառն աշխատանքից,
 Ոանուճոց արած¹⁾,
 Քնած են Հանգիստ.

Մէր-մանուկ այսպէս
 Գրկուած են, քնած.
 Վերելիցն ասես
 Ժպտում է Աստուած:

Միայն աղմկում է
 Այս լուսթիւնը
 Գիւղացու սայլի
 Խուլ ճննչիւնը:

Եւ նրա գլխին
 Կանգնած զիւղացին
 Հօրովէլ է երգում,
 Հանգիստ է Հրդին:

1) Գիւղերում վերմակի տակաւուժեան պատճառով
 ոտնոճոց են ~~տն~~անում—մի վերմակի տակ պատ-
 կում են այս և հակառակ կողմերից, այնպէս որ մէկի
 ոտները միւսի ծոցին է լինում:

Երջանիկ է նա
Բնութեան զրկում,
Հոգեանջ ցաւեր
Չունի իւր սրտում:

1887 թ. 10 օգոստ.



* *
*
—

(Պ ու շ կ ի ն ե ց .)

— * —

Եթէ իրաւ է, որ զիշերները,
Երբ որ հանդում են մարդիկ ներքեում,
Երկնքից իջնում լուսնի շողերը,
Գերեզմանների վերայ դողգողում.

Եթէ իրաւ է, որ այն ժամերին
Դատարկվում են լուռ գերեզմանները,
Օ, ես կրկանչեմ իմ սիրելիին,
Կրկանչեմ նրա նսեմ սաուերը.—

— Արի՛, յայտնուիր, սիրելի պատկեր,
Ինչպէս և էիր անջառման ժամին.—
Սառն ու դալկադէմ, ինչպէս ձմրան օր,
Խանդարած, խեղած տանջանքով վերջին:

Ախ, արի ինչպէս ասողիկ հեռաւոր,
Ինչպէս թոյլ հնչեւն թեթեւ զեփուռի,
Կամ թէկուզ ինչպէս տեսիլ ահաւոր,
Ինձ համար մին է, արի՛, միայն արի...

1890 թ. ապրիլի 4.




N-ին.



Մի՛ որոնիր... մի ժամանակ
Արհամարհածդ, այս կրճքի տակ,
Հառաչանքով դուրս թռաւ նա,
Եւ դատարկ է տեղը հիմայ:

Մի՛ արտասուիր... հեռու խնդրեմ:
Քո հայեացքից միայն ակնարկէմ
Յիշատակներ պիտի զարթնեն,
Եւ ի՞նչ օգուտ ունի է արդէն...

1890 թ. ապրիլի 21.





Ներևր, ո՛վ կոյս, որ յուզեցի
Խաղաղ կուրծքդ կուսական,
Մեղսոտ սրտով ես չուզեցի
Կործանել քո ասպազան:

Այն մի անմեղ խաղ էր, հողիս,
Պատանեկան հասակի,
Որ անցնելով պատճառ դարձաւ
Քո աչքերիդ արցունքի:

Ես զուշակել չըկարացի
Կեանքի վճիռն անարդար,
Մնդիսու թեամբ ես յարուցի
Այդ փոթորիկն անդադար:

Ներևր, ո՛վ կոյս, բուռն եռմունքին
Պատանեկան կրքերի,
Ներևր, հողիս, որ մատնեցին
Քեքոյչ սիրտդ վշտերի:



Եթէ իմ վերջին հայեացքը մնայ
Քո դէմքից վերայ ականջ, վշտահար,
Տեսնեմ արտասուքդ ու սիրտս իմանայ,
Որ սրտանց ես դու կոծում ինձ համար.

Եթէ զխանեամ, իրաւ պիտի դու
Ինձանից յետոյ ցաւես իմ մահով,—
Երգվում եմ սիրով, առանց ցաւելու
Կրմեռնեմ ես այդ յուսով ապահով:

Եւ երբ կըլսեմ իմ զերեզմանից
Ու կըձանաչեմ քո հեկեկանքը,
Կըմխիթարուիմ,—որ սիրում ես ինձ,
Որ քաղցր էր քեզ համար իմ կեանքը:

1890 թ. ապրիլի 1.





Ի՞նչ ես կատաղել անմեղ արարբից,
Միամիտ ամբոխ, ես ի՞նչ արեցի.
Ուզում ես անհեա քշել աշխարբից,
Որ ես իմ պարտքը միայն կատարեցի:

Արժանաւորի առաջ խոնարհած
Ես պատարագ եմ մատուցանում,
Եւ չար նախանձից ահա կուրացած
Դուն ինձ քարկոծել ես ցանկանում:

Հապա քո Ասատուածը որանդ է բնակիւում,
Սյնաե՞ղ արդեօք, ուր դուն էլ չըղիտես,
Նա՞ է որ միայն սարսափ է զարկում,
Սյղպիտի Ասատուած ո՞վ քարոյեց քեզ:

Միամիտ ամբոխ, մոլորուած ես դուն,
Ես անզիտութեամբ կուռք չըպաշտեցի.—
Ես այն մարդու մէջ տեսայ Ասարծուն,
Ահա, թէ ինչու երկրպագեցի:

ԱՂԾԹ Ք.

Սողոմոնի պէս, Տէր,
Ես խելք չեմ ուզում,
Ինձ երկար օրեր
Եւ փող աուր բաղում:

Մի ձեռք էլ ^չշոր,
Միայն մօղնի, Տէր,
Մին էլ մի հաստ փոր,
Տրօստ, ախոյններ:

Եւ բաւական է,
Դու վերէն զիտէ,
Թէ ինչեր կանէ,
Այդ ճառագ զիտէ:

1887 թ. Փետրվար.

ԳԻՇԵՐԱՅԻՆ ԱՌԱՋԻՆ ԱՍՏՂԻ ԳԻՄԱՅ.



Արևը թռաւ. երկինք աւ երկիր
Առաւ խաւարը գիրկն համատարած.
Դուն, փայլուն աստղիկ, դարձեալ շողացիր,
Սրգեօք այս գիշեր ի՞նչ բերիր մարդկանց:

Դուն աւեանցիր ժամը տեսութեան
Սյն սիրատենչակ սիրահարներին,
Որ սրտատրոփ անհամբերութեամբ
Սպասում էին խաղաղ գիշերին:

Դուն երևացիր խաւար երկնքից. . .
Օ՛, նա սպասում էր քո երևալուն.
Ահա յուսահատ, զզուած իւր կեանքից,
Խեղաուելու անոց մարդկանցից թազուն:

Դուն երևայիր, և բազկատարած
 Պատրաստվում է մէկն աղօթք անելու,
 Այն ինչ, մի ուրիշն իւր զէնքերն առած
 Գնում է անմեղ մարդ սպանելու:

Իսկ մեծատունը, խնջոյքից յոգնած,
 Հանգստանում է: Թէ նա յիշէր,
 Որ իւր պալատի պատի տակ կանդնած
 Թշուառն օթեան չունի այս զիշեր. . .

Դուն, փայլուն աստղիկ, որ շողշողում ես,
 Ինչպէս սիրուհու թրթռուն տենչանք,
 Ամէն զիշեր ինձ համար բերում ես
 Կրքերի յուզմունք և հոգու տանջանք:

1890 թ. մայիսի 12.





Երանութիւն էր խոստացել յոյսս ինձ,
Բայց ես չըզտայ նրան կեանքի մէջ,
Եւ քաջալերուած պատիր խոստամունքից,
Կեանքի գէմ ի զուր վարեցի ես վէճ:

Կարծում էի, թէ մարդիկ անհամբեր
Ուրախութեամբ ինձ սպասում էին,
Եւ ամեն քայլում խղճմտանք ու սէր
Մարդոց սրտերը միշտ յուզում էին:

Կարձաանէլ զհորք, որ անցար արադ,
Ինչպէս մի քամի, առաւել չընչին,
Եւ ահա ընկած իբրև մի նաւակ,
Որ կամէր լողալ աւաղի միջին:

Գունն անցար, այո, դարձեալ աշխարհը
 Կառավարվում է իւր օրէնքներով,
 Եւ զիմակ առած մեծ բարերարը
 Մարդիկ է սպանում գաղանի զէնքերով:

Մահացու ախտով վարակուածն ահա
 Անտրատու թեան հաղած վերարկու,
 Եւ խաւարասէր ամբոխը նրա
 Զազիր գործերին կանգնած խնկարկու.

Եւ հազարաւոր անմեղ հոգիներ
 Հալածուած են չար կրքերից անսանձ,
 Եւ, 'ի նախատինս բանականութեան,
 Արդար է միայն զօրեղը մարդկանց:

Ահա գեանաբարչ և չարախնդում
 Խումբերըն անսիրտ մարդ-հրէշների
 Վխտում են անվախ հրապարակներում,
 Իբրև առաջնորդ մարդոց մտքերի:

Ահա, խնդութեան ձայներ են թնդում,
 Իբրև արձագանդ չարութեան խօսքի,

Ի՞նչ են կամենում, էլ ի՞նչ են խնդրում
Պատուհասները մարդկային ազգի:

— Ի՞նչ էք կամենում դուք, մարդիկ ստոր,
Մահը, կործանումն արժանաւորի.
Եւ այդ բոլորը միայն մի կտոր
Հացի համար. սակայն, ով գիտի,

Գուցէ խաւարը ձեզ տուեց պաշտօն
Բանականութեան բռնաւորների,
Եւ դուք, անմիաներ, ամբողջ մարդկութիւն
Ձեզ յաւիտենական կարծում էք գերի:

Խղճե՛ր, նայեցէ՛ք, ահա ձեր զիմաց,
Առանց նայելու ձեր կտոր հացին,
Բանականութեան զաւակը կանգնած,
Սպասում է նա մօտ լուսաբացին:

Երանութիւն էր խոստացել յոյս ինձ,
Սակայն չըզայ նրան կեանքի մէջ.
Բայց չեմ վհատել. անտպաս մէկ իղձ
Դեռ ինձ մղում է գէպ յառաջ անվերջ:

Յառաջ կռուելով, և կրկայ մի օր,
Որ կ'ընկնի ներկան վառչուէր, դաժան,
Նրա աւերի վերայ փառաւոր
Սպազան լուսոյ կրկանդնի նշան:

1889 թ:





Շատերի նման նա էլ խեղզուեցաւ.
Փոքրոգութիւնն էք պարսաւում նրա:
Լուեցէ՛ք, հղբարք, ի՞նչ զիտէք ինչ ցաւ
Առաջնորդեց այն մարդուն զէպի մահ:

Տեսէ՛ք, այս խեղճը ախուր, զլիտակոր,
Մոլոր շրջում է սղուրի նման.
Բայց նրա մասին մի՛ դատէք, երբ որ
Զրգիտէք ինչն է կորացրել նրան:

Ահա, վարում են միւսին պատժարան.
Օ՛, մի՛ անուանէք նրան չարագործ.
Ի՞նչ զիտէք, զուցէ մի միտք երկնարժան
Այս օրին մասնեց այդ մարդուն անփորձ:

Եւ դուք ինչ զիտէք թէ երգիչն ուրախ,
Որ ձեզ համար միշտ երգեր է երգում,
Քարասիրտ մարդկանց ծաղբանքից ծածկած
Ինչ ցաւեր ունի իւր սրտի խորքում:

ՉԱՐԱՄԻՏՆԵՐԻՆ.

— օօ՛ճ՛օօ —

Դուք, մեծ հայրերի ընկած զաւակներ,
Դուք, ով սարուկներ մոլի կրքերի,
Դուք, ով զեղևութեան խղճայլի հիւրեր,
Որ շուայտ կեանքին դարձել էք գերի.

Դուք, որ ընկնում էք, ոչ պատերազմում
Թշնամու սրով և ոչ ձեր մահով,
Որ կղբայրադու ժողով էք կազմում
Եւ տենող աչքից կարծում ապահով.

Դուք, որ պատրաստէք անմեղին կապած
Սեղանաւորի ոտքի տակ զոհել,
Որ աւազակի առաջ սարսափած,
Ճշմարտութիւնն էք ուրանում խօսել.

Դ՛նւք, որ ուզում էք աշխարքին խաբել,
 Եւ գատաստանի առաջ գողալով
 Գիտէք կեղծաւոր արտասուք թափել
 Չարութեամբ լեցուն, յանցաւոր սրտով:

Դ՛նւք, որ մարդկեանց աչքերն էք կապուս,
 Ո՛վ սպասաւորներ բանախ, խաւարի,
 Որ հարազատի արիւնն էք թափում
 Եւ ձեր եղբօր գոյքն առնում աւարի:

Դ՛նւք, որ այրիի դառն արտասուքով
 Շաղախեցիք ձեր սեղանի հացը,
 Որ հպարտացած անօրէն գործքով
 Հարցանում էք թէ՛ ո՞ւր է Աստուածը.—

Կրհանի նա ձեզ, բարկութեամբ արդար
 Արժանի մահով պատուհասելու,
 Եւ ո՞վ պիտի ձեզ ցոյց ապ ճանապարհ
 Նորա բարկութեան պատժից փախչելու:

1890 թ. մայիսի 20.



Մ Ի Ը Մ Ի Տ Ն Ե Ր Ի Ն.

Երանի է ձեզ, որ՝ չէք հասկանում
Թէ մարդիկ ինչու ինչեր են անում.
Երանի ձեզ, որ՝ մարդու չէք զրկում,
Եւ ոչ ձեզ հասած հարուածն էք զգում.
Երանի ձեզ, որ՝ ոչինչ չզգիտէք,
Որ հոգով անդորր, սրտով հանդիստ էք:

1890 թ. յունիսի 12:



*
* *

Երբ ես ախուր, յուսահատ,
Ինձ կորած եմ համարում,
Շուրջս մեռած, անտպատ,
Սրտիս երկիւղ է ախրում:

Մահու ձայնը դառնալուր
Հասանում է ահանջիս,
Մարդիկ մնում անհամբոյր
Եւ խլանում են կանչիս:

Մի զօրութիւն հզօրեղ
Ինձ յուսադրում է յանկարծ.—
Եւ զղում եմ, ամեն տեղ
Դուն ինձ հեա ես, Աստուած:

1889 թ.



Մ Ե Ր Գ Ե Ր Է.

Երբ որ վեհութեան կնիքը ճակատին
Եւ ճշմարտութեան սուրբ պատգամներով
Նա յայանուեցաւ մոլոր աշխարհին
Եւ դարձ քարոզից հրաթափ լեզուով,

Նրա աստուածային ձայնից սարսափած
Գիշերաատեսիլ մարդիկ յուզուեցին,
Իրանց սեղանից վեր կացան հարբած,
Մոլեղնութեան մէջ աղաղակեցին.

—Ո՞վ ես դուն, արի՛, այս մեր յանցաւոր
Ուրախութեանը մասնակից եղեր,
Կամ թող վայելենք մեր կեանքն անցաւոր,
Թէ չէ, խիստ պատժի քարերից փախիր:

Սակայն անվհատ նա յառաջ գնաց
 Անուշաղիւր իւր անձի վնասին,
 Մորըրու-թիւնը ներելով մարդկանց՝
 Հոգ տարաւ նրանց փրկութեան մասին:


Եւ երբ որ լուսոյ նա ջահը ձեռքին
 Մօտեցաւ կորստեան փոսի եզերքին,
 Ապերախա ձեռքով ամբօխը խաւար
 Զարկեց, խորտակեց ջահը փրկարար:

Ժամանակ անցաւ. թշուառ ամբօխին
 Արդէն փորձանքը վրայ էր հասած,
 Երբ ուշքի եկաւ, վայ տուեց զլիսին.—
 «Նա մարդարէ էր, նա իրաւ ասաց»:


1890 թ. մայիսի 1.



Գլխավոր-արք.







In.

ԳԱՆ Հիմնարար Ձիտ. Գրադ.



FL0406115

L64

1674